«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված

«Վանաձորի Հ. Թումանյանի անվան

պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորի 2.05.2018 թ. թիվ 293 Լ/Կ հրամանի

ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ 2018-2019 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 4 26.04.2018թ.

Վանաձոր

2018թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում է «Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) մագիստրատուրայի առկա ուսուցման համակարգում 2018-2019 ուսումնական տարվա ընդունելության կարգը (այսուհետ՝ Կարգ):

2. Կարգի իրավական հիմքերն են ՀՀ սահմանադրությունը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքը, Համալսարանի կանոնադրությունը, ՀՀ ԿԳ նախարարի 2007 թ. դեկտեմբերի 6-ի թիվ 1193-Ն հրամանով հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը»:

3. Մագիստրատուրայում կարող է սովորել բակալավրի, դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի որակավորում ունեցող անձը մասնագիտական գիտելիքները խորացնելու, վերամասնագիտանալու, ինքնուրույն գիտական ուսումնասիրություններ կատարելու, մասնագիտական, գործնական, նորարարական, տեխնոլոգիական զարգացումների ու նոր հնարավորությունների ընկալման ունակություններ ձեռք բերելու և մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար:

II. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏԵՂԵՐԸ

4. Մագիստրատուրայի 2018-2019 ուսումնական տարվա ընդունելությունը կատարվում է հետևյալ մասնագիտությունների գծով.

Դասիչը, Մասնագիտությունը	Դասիչը, Կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)		Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ /վճարովի/	Ուսման վարձը /հազ. դրամ/
		ընդամենը	այդ թվում՝ բանակից զորացրված (ԲԶ)		
1	2	3	5	7	8
011101.00.7 Կրթական գիտություններ					
	011102.05.7 Կրթության կառավարում	2		8	400
011401.00.07 Մասնագիտական մանկավարժություն					
	011401.01.7 Կենսաբանություն	1		9	350
	011401.04.7 Ֆիզիկա	1		9	350
	011401.05.7 Մաթեմատիկա	2		8	350
	011401.06.7 Ինֆորմատիկա	1		9	350
	011401.18.7 Պատմություն	1		9	350
	011401.19.1 Հայոց լեզու և գրականություն	2		8	350
	011401.20.7 Ռուսաց լեզու և գրականություն	1		9	350
	011401.21.7 Անգլերեն լեզու և	2		18	350

	գրականություն				
031301.00.7 Հոգեբանություն					
	031301.01.7 Հոգեբանություն	2		18	350
053101.00.7 Քիմիա					
	053101.02.7.Դեղագործական քիմիա	2		13	350
041301.00.7 Կառավարում					
	041301.17.7 Հանրային կառավարում	2		18	500
Ընդամենը		19	0	136	366,7

III. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

5. Համալսարանի մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել բակալավրի դիպլոմավորված մասնագետի, մագիստրոսի որակավորում ունեցող ՀՀ քաղաքացիները: Մագիստրոսի որակավորում ունեցող քաղաքացիները երկրորդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

Օտարերկրյա քաղաքացիները և ՀՀ քաղաքացիություն չունեցող անձինք մագիստրատուրա կարող են ընդունվել միջպետական կամ միջգերատեսչական պայմանագրերի, համաձայնագրերի հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ:

6. Համալսարանի մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է երկու փուլով, մրցութային կարգով.

ա) 1-ին փուլով մագիստրատուրայի ընդունելությունն ըստ մասնագիտությունների անցկացվում է ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) տեղերի համար,

բ) 2-րդ փուլով մագիստրատուրայի ընդունելությունն անցկացվում է ըստ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հաստատված ուսման վարձի մասնակի զեղչի կիրառման (վճարովի), առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի ուսուցման տեղերի համար:

7. Առաջին փուլով ընդունելության համար կարող են դիմել տվյալ մասնագիտության Համալսարանի առկա ուսուցման համակարգի տվյալ ուստարվա, իսկ հեռակա ուսուցման համակարգի՝ 2016-17 ուստարվա շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքից և պետական քննություններից ստացել են «լավ» կամ «գերազանց» գնահատականներ, և որոնց դիպլոմի հավելվածում նշված բոլոր առարկաների քննական գնահատականների միջինը կամ միջին որակական գնահատականը կազմում է.

- «4.00» կամ ավելի միավոր (5 բալանոց համակարգով), «12» կամ ավելի միավոր (20 բալանոց համակարգով), «71» կամ ավելի միավոր (100 բալանոց համակարգով)՝ «Հայոց լեզու և գրականություն», «Ռուսաց լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն», «Պատմություն», «Հանրային կառավարում», «Կրթության կառավարում», «Հոգեբանություն» մասնագիտությունների համար,
- «3.75» կամ ավելի միավոր (5 բալանոց համակարգով), «11» կամ ավելի միավոր (20 բալանոց համակարգով), «67» կամ ավելի միավոր (100 բալանոց համակարգով)՝

«Ինֆորմատիկա», «Կենսաբանություն», «Դեղագործական քիմիա», «Մաթեմատիկա» «Ֆիզիկա» մասնագիտությունների համար,

7. Համալսարանի մագիստրատուրայի ընդունելության առաջին փուլն իրականացվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ մրցույթային կարգով, բացառությամբ «Կրթության կառավարում», «Հանրային կառավարում» և «Հոգեբանություն» մասնագիտությունների:

Նշված մասնագիտություններով ընդունելությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերով և մասնագիտական ընդունելության քննությունների արդյունքներով անցկացվող մրցույթի հիման վրա:

«Կրթության կառավարում», «Հանրային կառավարում» մասնագիտությունների դիմորդները հանձնում են ընդունելության քննություն մասնագիտությունից և ստուգարք օտար (անգլերեն) լեզվից:

9. Քննությունների հարցաշարերը հաստատվում են մասնագիտական ամբիոնների կողմից և մինչև 2018թ. մայիսի 1-ը տրամադրվում են ուսումնամեթոդական վարչությանը:

10. Առաջին փուլում հավասար միավորների դեպքում մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

10.1. նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

10.2. մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

10.3. տպագրված կամ տպագրման ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությամբ,

10.4. ոչ մասնագիտական առարկաներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ողջ ընթացքում ակադեմիական պարտք չունեցած շրջանավարտներին:

11. Առաջին փուլի ընդունելության քննությունները կազմակերպվում են 2018թ. հունիսի 5-ից հունիսի 20-ը (ըստ ժամանակացույցի):

12. «Կրթության կառավարում», «Հանրային կառավարում» և «Հոգեբանություն» մասնագիտություններով անվճար սովորելու համար մրցույթը չհաղթահարած դիմորդները իրավունք ունեն մասնակցել երկրորդ փուլին (վճարովի համակարգ) անցկացվող ընդունելության քննություններին: Այս դեպքում տվյալ դիմորդների վերջնական արդյունք է համարվում ստացած ավելի բարձր գնահատականը:

13. Առաջին փուլում առաջացած թափուր տեղերը համալրվում են՝ ըստ սույն Կարգի դրույթների՝ մրցույթի արդյունքներով:

14. Մագիստրատուրայի ընդունելության երկրորդ փուլին կարող են մասնակցել.

14.1. Առաջին փուլին մասնակցած և անվճար համակարգ չընդունված դիմորդները, որոնք կարող են պահպանել ընդունելության քննության դրական գնահատականը,

14.2. Համալսարանի և այլ բուհերի՝ տվյալ և նախորդ ուսումնական տարիների բակալավրիատի շրջանավարտներ և դիպլոմավորված մասնագետներ,

14.3. պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված անձինք (անվճար՝ ՀՀ կառավարության կողմից տրամադրված պարտադիր զինվորական

ծառայությունից զորացրված անձանց համար նախատեսած անվճար տեղերի տրամադրման դեպքում, կամ վճարովի հիմունքներով):

15. Երկրորդ փուլի ընդունելության քննություններն անցկացվում են 2018թ. օգոստոսի 29-ից մինչև 31-ը:

16. Երկրորդ փուլով նույն մասնագիտությամբ ուսուցման վճարովի համակարգ (առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի) մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է ներկայացված փաստաթղթերի հիման վրա՝ մրցութային կարգով: Մրցույթն անցկացվում է հետևյալ չափանիշների առաջնահերթությամբ.

16.1. նախորդ ուսումնառության ծրագրում ցուցաբերած ընդհանուր առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

16.2. մասնագիտական դասընթացներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով,

16.3. տպագրված կամ տպագրության ընդունված գիտական աշխատությունների, թեզիսների և զեկուցումների առկայությամբ,

16.4. ոչ մասնագիտական դասընթացներից ցուցաբերած առաջադիմության գումարային միջին գնահատականով կամ միջին որակական գնահատականով:

Հավասար միավորների դեպքում նախապատվությունը տրվում է ուսումնառության ընթացքում ակադեմիական պարտք չունեցած շրջանավարտներին:

17. Երկրորդ փուլով այլ մասնագիտությամբ մագիստրատուրայի ընդունելությունն իրականացվում է բակալավրիատի կրթական ծրագրի ծավալի սահմաններում մասնագիտական առարկա(ներ)ից քննության (քննությունների) արդյունքների հիման վրա:

18. Երկրորդ փուլով մագիստրատուրայի ընդունելության մրցույթն անցկացվում է ըստ Կարգի 16-րդ կետի չափանիշների:

19. Այլ մասնագիտություն ունեցող դիմորդների ընդունելությունը կատարվում է նույն մասնագիտությամբ առաջին և երկրորդ փուլերով ընդունելության անցկացումից հետո թափուր մնացած վճարովի տեղերի հաշվին՝ համաձայն Կարգի 16-րդ կետում նշված պայմանների:

IV. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ ԵՎ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀՐԱՄԱՆԱԳՐՈՒՄԸ

20. Մագիստրատուրայի ընդունելությունն իրականացնելու նպատակով Համալսարանի ռեկտորի հրամանով և նախագահությամբ ստեղծվում է ընդունող հանձնաժողով, որում ընդգրկվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը, ուսումնամեթոդական վարչության պետը, մասնագիտական կրթական ծրագրերի (ՄԿԾ) կրթական գործընթացը կազմակերպող դեկանները, ընդունելության պատասխանատու քարտուղարը:

21. Քննությունների անցկացման նպատակով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի առաջարկով, Համալսարանի ռեկտորի հրամանով ձևավորվում են քննական հանձնաժողովներ:

22. Ընդունող հանձնաժողովն իրականացնում է մրցույթ քննությունների արդյունքների հաշվառմամբ՝ ըստ մասնագիտությունների:

23. Հանձնաժողովի անցկացրած մրցույթի արդյունքներով դիմորդներն ընդունվում են Համալսարան:

24. Ընդունված դիմորդը Համալսարանի ռեկտորի հրամանով կցագրվում է մասնագիտական կրթական ծրագրին, իսկ նրա և Համալսարանի միջև պայմանագրի կնքումից և նրա կողմից ուսման վարձը վճարելուց հետո կցագրվածը Համալսարանի ռեկտորի հրամանով դառնում է մագիստրատուրայի ուսանող:

V. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱ ԸՆԴՈՒՆՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԴԻՄԵԼՈՒ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

25. Համալսարանի կողմից զանգվածային լրատվության միջոցներով տրվում է հայտարարություն ընդունելության մասնագիտությունների, տեղերի և կանոնների վերաբերյալ: Հայտարարությանը կցվում է մագիստրանտի հետ կնքվող պայմանագրի տեքստը:

26. Առաջին փուլով մագիստրատուրայի ընդունելության համար դիմումի և փաստաթղթերի ընդունումը կատարվում է 2018թ. մայիսի 26-ից մինչև հունիսի 10-ը, երկրորդ փուլով՝ 2018թ. հունիսի 8-ից մինչև օգոստոսի 28-ը ներառյալ:

27. Համալսարանի մագիստրատուրայի դիմորդները ընդունող հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

ա) մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ՝ Համալսարանի ռեկտորի անունով (լրացվում է տեղում),

բ) բարձրագույն կրթության մասին դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճենները,

գ) երաշխավորություն ֆակուլտետի գիտական խորհրդից (նախորդ տարիների շրջանավարտները, պարտադիր ժամկետային զինծառայությունից զորացրվածներն ու այլ բուհերի շրջանավարտները չեն ներկայացնում),

դ) նախորդ տարիների շրջանավարտները, պարտադիր ժամկետային զինծառայությունից զորացրվածներն ու այլ բուհերի շրջանավարտները ներկայացնում են տեղեկանք միջին որակական գնահատականի վերաբերյալ,

է) ինքնակենսագրություն (CV),

զ) անձնագրի պատճեն,

է) 3 լուսանկար (3x4 սմ չափի),

ը) հրատարակված կամ հրատարակման ընդունված գիտական աշխատությունների ցուցակ (դրանց առկայության դեպքում):

VI. ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԴԱՍԵՐԻ ՍԿԻԶԲԸ

28. Մագիստրատուրայի առաջին կուրսի դասերն սկսվում են 2018թ. սեպտեմբերի 3-ից: